ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Վարկատուի լոգո (սեղմել և քնսել)

# ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (ՕՎԵՐԴՐԱՖՏԻ) ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գործողության սկիզբ: 09.11.2016 Ավարտ:

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ,** որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

## 1.

| | |
|---|---|
| **Վարկատուի անվանումը** | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ |
| **Գտնվելու վայր** | ՀՀ ք.Երևան, Պուշկինի 19 |
| **Հեռ.** | 010 59 23 23 |
| **Էլ.փոստ** | araratbank@araratbank.am |

## 2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| **2.1 Վարկի անվանում** | Գյուղատնտեսական օվերդրաֆտ |
| **2.2 Վարկի գումար** | Մինչև 500.000 (համարժեք ԱՄՆ դոլար) |
| **2.3 Վարկի ժամկետ** | մինչև 24 *ամիս* |
| **2.4 Տարեկան անվանական % (ՏԱՏ)** | ՀՀ դրամ՝ 15%, ԱՄՆ դոլար՝ 12% |

*Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:*

| | |
|---|---|
| **2.5 Տարեկան փաստացի % (ՏՓՏ)** | ՀՀ դրամ՝ 18.58%, ԱՄՆ դոլար՝15.06% |

*Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:*

## 3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| ☐ **3.1 Գրավ** | Չի պահանջվում | ☐ **3.2 Երաշխավորություն** | Չի պահանջվում |

## 4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| **4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն** | % | **4.3 Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ** | Հավասարաչափ ամորտիզացիա |
| **4.2 Արտոնյալ ժամկետ** *(Գրելու պերիոդ)* | | **4.4 Զոգտագործված մասի դիմաց հաշվարկվող %** | % |

## 5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| **5.1 Վարկային հայտի ուսումնասիրության** | Չի պահանջվում | **5.5 Գրավի ապահովագրության** | Չի պահանջվում |
| **5.2 Վարկի սպասարկման** | Չի պահանջվում | **5.6 Քարտի սպասարկման** | Վիզաէլեկտրոն՝1.500կամDC Young Professional՝5.000 ՀՀ դրամ |
| **5.3 Գրավի գնահատման** | Չի պահանջվում | **5.7 Կանխիկացման** *(վարկատուի բանկոմատներից կանխիկացման)* | Չի պահանջվում |
| **5.4 Նոտարական վավերացման** | Չի պահանջվում | **5.8 Այլ միջնորդավճարներ** | Չի պահանջվում |

| | |
|---|---|
| **5.9 Ընդամենը այլ վճարներ** | Վիզա Էլեկտրոն՝1.500 ՀՀ դրամ (տարեկան)կամ DC YOUNG Professional ՝ 5.000 ՀՀ դրամ (տարեկան) |

*Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար*

## 6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

## 7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

| | |
|---|---|
| 7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում | օրական 0.1% |
| 7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում | օրական 0.2% |
| 7.3 Այլ վճարներ | |

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող էկարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

## 8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

- (●) Վարկառուի անձնագիր և սոց. քարտ կամ նույն. քարտ
- (●) ՀՎՀՀ, պետական գրանցման վկայական
- (●) Կանոնադրություն իրավասու մարմնի որոշում
- (●) Բանկի պահանջով նաև այլ փաստաթղթեր
- ( )
- ( )
- ( )
- ( )

## 9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

**Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ** 2 աշխատանքային օր

**Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ** 1 աշխատանքային օր

**Վարկը տրամադրելու ժամկետ** 5 աշխատանքային օր *(Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո:)*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

### ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

**ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

**ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ**
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

**ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

**ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»**
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

**Ի՞ՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**
Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

**Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝** այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից: